1864. 13 Ապրիլի ըստ հին տոմարի։

Թիւ 7.

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ։

1864. 25 Ապրիլի ըստ նոր տոմ.

Registered at the General Post-Office for transmission abroad.

# ԵՐԿՐԱԳՈՒՆԴ

## ԼՐԱԳԻՐ ՄԱՆՉԵՍՏԵՐԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏՆԱԿԱՆ, ԿՐՕՆԱԿԱՆ, ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ։

Հրատարակութեան, Խմբագրութեան եւ Բաժանորդագրութեան կեդրոնատեղին է ի Մանչեստր։

—Նամակք յօդուածք, գիրք եւ դրամոյք (որոնք է ... փոստայի) ուղղելի յանուն Ասպետ Կարապետ Վ. Շահնազարեանց, ... այսպէս.

M. le Chevalier K. Vardápete Shahnazariantz,
151, Rumford Street, Manchester, (Angleterre.)

Տարեկան գին հանդերձ ծախուց փոստայի, ընդ երկիրն Անգլիոյ եւ Ֆրանսայի ..., է 25 շ. ֆ.
—Այն երկրներն ուր փոստայի ծախքն առանձին վճարելի է։
—Վենետիկ . . . . . . . . . . 13 "
—Եւրոպա . . . . . . . . . . 7 "
—Մէկ թերթի գին է Մանչեստր է . . . . . 5
այլուր . . . . . . . . . . 7
Բաժանորդագրութիւն առնուի միայն կանխիկ վճարմամբ։

Ստորագրութեան տեղիքն են Կոստանդնուպոլիս Սարգիս Աղայ Մ. Հիսարեանի սենեակն ի Ղալաթա. —Իզմիր Մարկոսեան Յակոբ Աղայի սենեակն. —Հալէպ Յովհաննէս Աղայ Պիւրքճեանոյի սենեակն. —Սուրբ Երուսաղէմ Արժանապատիւ Եսայի Վարդապետի սենեակն. —Աղեքսանդրիա (Եգիպտոս) Տէր Գասպարեան Ղազարոս Աղայի սենեակն. —Կալկաթա Սրբակրօն Աւագ քահանայ Տէր Յովհաննէս Խաչիկեանի և Ասպետի սենեակն. —Բաթաւիա Պ. Մանուկ Որդանանեանի սենեակն. —Լոնդոն Աղայ Մաքսուդովի սենեակն. —Փարիզ Աղա Պօղոս Արիսճեանի սենեակն ։ Առ այժմ, ուզողներն կրնան վերոյգրեալ սենեկաց մէկէն առնալ մինչև որ յատուկ գործակալներ հաստատեմք բազմաձայ և ընթերցասէր քաղաքներ ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ։

Տեսութիւն Քաղաքականութեան. —Ֆրանսա. —Մեքսիկա. —Մեծն Բրիտանիա. —Ռուսիա. —Գերմանիա. —Թիւրքիա. —Կանոնադիր եւ Բանադրանք. —Բանաստեղծութիւն. —Նուէր. —Զուարճալիք. —Առեւտրական։

## ՏԵՍՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Եւրոպայի գլխաւոր լրագիրներն, որք, անցեալ շաբթուն, ամեն բան սև կտեսնէին, այս շաբթուս, ընդհակառակն, ամեն բան ճերմակ կտեսնեն, և յուսահատութենէ քաջալերութեան անցնելով՝ Եւրոպայի հորիզոնի վերայ արդէն հաշտութեան ծիածան կերևակայեն թէև կռուողներէն և ոչ մէկն յաղթեալ՝ ներս հնազանդ ըլլալ, ոչ ալ խորհրդակցութիւնն համախմբեալ՝ որ և իցէ որոշումն կծանուցանէ անիրաւաց անիրաւութիւնն յանդիմանելով կամ անմեղաց անմեղութիւնն պաշտպանելով։

Զասիկ պարտաւորդութենէ յետոյ Անգլիոյ կըրկին խորհրդարաններն բացուեցան, և արքունեաց հախորդ կառավարութիւնն կամ տօրինեալն անփոփոխ հաղորդակցութիւնն ....... Լորդ Փալմերստոն և կոմս Ռըսըլ մեծահանճար պատասխանատուութեամբ Մեծին Բրիտանիոյ արքունեաց ընտած քաղաքավարութիւնն կարդարացնեն. չատ անգամ ալ ծախահարութեան կարժանանան, այնպէս որ արդի վիճակն, որ, քանի մի օր առաջ, անկման մօտ կթուէր, այժմ, որ բան զոր աւելի կապահովուի. և իրաւամբ ալ այնպէս ըլլալու է. ըստ որում Անգլիոյ Տէրութեան արդի մարդոյ մէջ, չկայ բնաւ լորդ Փալմերստոնի հանճարին հաւասար հանճար, և ոչ մարդ, որոյ վերայ հասարակութիւնն այնչափ վստահութիւն ունենայ, որչափ արդի պաշտօնէից Նախագահին վերայ։

Անգլիոյ և Ֆրանսայի արքունիքն, որոյ մէջ անցեալ Նոյեմբերէն ի վեր բաւական ցրտութիւն կար, քանի մի ատենէ ի վեր իրարու մօտենալու, զիրար գրկելու և հաշտութեան համբոյր տալու նշաններ կերևցունեն. ո՛ գիտէ թէ ամսոյս 20ին բացուելիք խորհրդակցութիւնն դքսութեանց խընդիրն կարգի դնելու համար, յառաջընթաց չըլլայ ալխի Նաբոլէոնեան ընդհանուր ժողովին Եւրոպայի բոլոր կախ մնացած խնդիրներն տնօրինելու, և, եթէ կարելի է, այսպէս ըսել, Եւրոպայի ազգաց յարաբերութիւններն նոր հիմանց վերայ հաստատելու համար, 1815 թուի դրուած հիմն ոչ միայն խախտուած գոլով, այլև կործանեալ։ Այսպէս ապաքէն, լորդ Փալմերստոն Պ. Ստանսֆելդ զոհելով և քանի մի բարի վկայութիւն տալով Ֆրանսայի Միապետի բարեմտութեանցն, ոչ միայն իր դրութիւնն կամրապնդէ և իր ներքին հակառակորդներն չփոթեց, այլ եւ Ֆրանսայի կայսեր օրինաւոր հատուցումն տալով՝ անոր բարեկամութիւնն շահեցաւ, որ թերևս աշխարհի խաղաղութեան գրաւականն է։

—Դանիմարքէն հասած լուրերն միշտ արեանհեղութիւն, ամբակոծութիւն, խրամահատութիւն, աւեր և սասանութիւն կգուժեն։ Որչափ, մէկ կողմէն, Պրուսիացիք իրենց հանճարն, հմտութիւնն, ռազմական մթերն կցայլեն, միւս կողմէն, Դանէրն, դիւցազնական արութեամբ, իրենց արեամբ իրենց երկիրն ոռոգելով իրաւունքնին կպաշտպանեն, մէկ՝ տասնի, և երկու՝ քսանի դէմ ոգորելով։

—Լոնդոնի խորհրդակցութիւնն, որ ամսոյս 12ին բացուէր պիտի, ետ ձգուեցաւ Գերմանական Դիետի տակաւին պատասխան չտալուն համար Անգլիոյ հրաւէրքին. սակայն Լորդ Փալմերստոն ի պաշտօնէ ծանոյց Լորդերու Խորհրդարանին, որ անիկա, առանց այլ ևս յետաձգելու, ամսոյս 20ին բացուի պիտի, չնայելով բնաւ թէ գերմանական Դիետն պատգամաւոր խրկէ պիտի թէ ոչ։

Այլ այս թիւս ալ անցաւ. և խորհրդակցութիւնն դեռ չբացուեցաւ։ Այլև Լորդն հաւաստեց նաև թէ, ի սոսկալ հարկին, առանց Դիետի պատգամաւորին խորհրդակցութիւնն պիտի բացուի, թէ Ֆրանսա նոյն Դիետի գործակցութիւնն իրենին թէութիւն չդներ sine qua non (առս թէ ոչ). թէ Ֆրանսա դքսութեանց քուէն առաջար-

